600.0208.06.07.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

6 հուլիսի 2016 թվականի №208Ա
ք. Երևան

«ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈՒԳԱՆՔ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի №376Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2014 թվականի հոկտեմբերի 1-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու և նախազգուշացնելու մասին» №376Ա որոշմամբ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է 7519.6 կՎտ հաշվարկային հզորությամբ «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0560 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա)՝ մինչև 2032 թվականի ապրիլի 1-ը գործողության ժամկետով, որից կառուցման ժամանակահատվածը՝ մինչև 2017 թվականի ապրիլի 1-ը,

բ) Ընկերությունը 2016 թվականի հունիսի 2-ի, 7-ի և 9-ի գրություններով դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ Կայանի աշխատանքային նախագծում տեղի են ունեցել փոփոխություններ, ըստ որոնց Կայանի հաշվարկային հզորությունը դարձել է 3887 կՎտ՝ ներկայացնելով նոր ջրօգտագործման թույլտվություն, անհրաժեշտ հողամասերի նկատմամբ իրավունքները հաստատող փաստաթղթերը ու նոր նախագիծ՝ իր տեխնիկական և բնապահպանական փորձաքննությունների դրական եզրակացություններով, և խնդրել է համապատասխան փոփոխություններ կատարել Լիցենզիայի պայմաններում,

գ) Հանձնաժողովի աշխատակազմի կողմից 2016 թվականի հունիսի 20-ին Կայանում իրականացված մոնիթորինգի արդյունքում պարզվել է, որ՝

- Քարահունց գետի 1597,6մ նիշի վրա (նախկին 1545մ փոխարեն) արդեն իսկ կառուցվել էր մետաղական ջրընդունիչ հանգույց, սակայն ձկնանցարանները գտնվում էին կառուցման փուլում: Գլխամասային հանգույցից սկիզբ էր առնում միաճյուղ խողովակաշար և անցնելով 1842մ (համաձայն փոփոխված նախագծի) միանում Աղանձու գետից սկիզբ առնող ճնշումային խողովակաշարին: Նշված փոփոխությունները կատարվել էին համաձայն Կայանի փոփոխված նախագծի.
- Աղանձու գետի 1594,6մ նիշի վրա (նախկին 1527մ փոխարեն) արդեն իսկ կառուցվել էր մետաղական ջրընդունիչ հանգույց, սակայն ձկնանցարանները գտնվում էին կառուցման փուլում: Գլխամասային հանգույցից սկիզբ էր առնում միաճյուղ ճնշումային խողովակաշար, որը անցնելով 3020մ Կայանի շենքի մոտ ճյուղավորվում է երեք մասի հիդրոագրեգատներին միանալու համար: Նշված ճնշումային խողովակաշարին է միանում նաև Քարահունց գետից սկիզբ առնող դոտացիոն խողովակաշարը: Նշված փոփոխությունները կատարվել էին համաձայն Կայանի փոփոխված նախագծի.
- Կայանի շենքը կառուցվել էր 1305մ նիշում, նախկին նախագծով նախատեսված 980մ նիշի փոխարեն, որի դեպքում Կայանի հաշվարկային ճնշումը կազմելու էր շուրջ 480մ.
- Կայանի շենքում փոփոխված նախագծով նախատեսված երեք հիդրոագրեգատներից տեղակայված էին երկուսը, որոնց հիմքերի ամրացման և ջրահեռացման համար կատարվում էին շինարարական աշխատանքներ, իսկ երրորդ հիդրոագրեգատը դեռևս տեղակայված չէր, իսկ Կայանի շենքից դեպի Տանձատափ գետ կառուցված էր ջրահեռացման խողովակաշար:

դ) Լիցենզիայի պայմանների՝

- 6-րդ կետի համաձայն՝ Լիցենզիան ուժի մեջ մտնելու պահից լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է կառուցել (վերակառուցել, ընդլայնել) 7519,6 կՎտ հաշվարկային հզորությամբ «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել շուկայի կանոններով:
- 7-րդ կետի համաձայն՝ փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1) Ջրառի նիշերն են՝ 1545,0 և 1527,0 մ., ջրահեռացման նիշն է՝ 980,0 մ.,
2) Հաշվարկային ելք 2,0 խմ/վ.,
3) Հաշվարկային ճնշում՝ 479,6 մ.,
4) Փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն 7519,6 կՎտ:

- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, այլ օրենքների, Լիցենզիայի, Հանձնաժողովի կողմից ընդունված և այլ իրավական ակտերի պահանջներին:
- 34-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

ե) Հանձնաժողովը 2016 թվականի հունիսի 24-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ և 34-րդ կետերի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

զ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը 2016 թվականի հունիսի 27-ի գրությամբ հայտնել է, որ դեռ մեկ տարի առաջ տեղեկացրել է Հանձնաժողովին Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու անհրաժեշտության մասին, իսկ Կայանի շինարարական աշխատանքները կատարվել են Հայաստանի Հանրապետության օրենքներին համապատասխան՝ ստանալով համապատասխան պետական մարմինների, այդ թվում՝ Հանձնաժողովի դրական եզրակացությունները, իսկ փաստաթղթերի ուշացումը տեղի է ունեցել Ընկերությունից անկախ հանգամանքների պատճառով, և խնդրել է համապատասխան փոփոխություններ կատարել Լիցենզիայի պայմաններում,

է) իրականացված վարչական վարույթի շրջանակում պարզվել է, որ՝

- Ընկերությունը 2014 թվականի սեպտեմբերի 12-ի գրությամբ հայտնել էր, որ անհրաժեշտություն է առաջացել փոփոխություններ կատարել նախագծային փաստաթղթերում, ինչի ավարտից հետո նշված փաստաթղթերը կներկայացվեն Հանձնաժողով, սակայն որևէ հանգամանքի մասին, որը հանգեցրել է կամ կարող է հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների, Ընկերությունը չի տեղեկացրել, այնինչ իրականացրել է Կայանի կառուցման (շինարարական) աշխատանքները և գրեթե ավարտին հասցրել Լիցենզիայի պայմաններով ամրագրված տեխնիկատնտեսական ցուցանիշներից տարբերվող կայան,

մասնավորապես՝ փոփոխված նախագծի համաձայն Կայանի հաշվարկային հզորությունը 3887 կՎտ է, այնինչ Լիցենզիայի պայմանների համաձայն՝ 7519,6 կՎտ է, փոփոխված նախագծի համաձայն կայանի հաշվարկային ճնշումը 242,3 մ է, այնինչ Լիցենզիայի պայմանների համաձայն՝ 479,6 մ է, էապես տարբեր են նաև փոփոխված նախագծում և Լիցենզիայի պայմաններում ամրագրված ջրառի և ջրահեռացման նիշերը,

- Ընկերությունը հանձնաժողով չի ներկայացրել համալիր փորձաքննություն անցած Կայանի փոփոխված աշխատանքային նախագիծը, նոր ջրօգտագործման թույլտվությունը, ուստի Հանձնաժողովը չէր կարող որևէ դիրքորոշում հայտնել վերոնշյալի վերաբերյալ՝ առավել ևս տրամադրեր դրական կարծիք,
- Ընկերությունը որևէ կերպ չի հիմնավորել փաստաթղթերի ներկայացման ուշացումը այլ տեխնիկատնտեսական ցուցանիշներով կայանի կառուցման ողջ ժամանակահատվածում Ընկերությունից անկախ հանգամանքների պատճառով տեղի ունենալու փաստը,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը առանց Հանձնաժողովի կողմից նոր նախագծին և ջրօգտագործման թույլտվությանը համապատասխան Լիցենզիայի պայմաններում փոփոխություններ կատարելու, 2015 թվականի փետրվար, 2016 թվականի հունիս ամսիներին ձեռք բերված նոր հողամասերում փոփոխված նախագծին համաձայն իրականացրել է Կայանի կառուցման (շինարարական) աշխատանքներ, կառուցել է Լիցենզիայի պայմաններով ամրագրված տեխնիկատնտեսական ցուցանիշներից տարբերվող կայան, որը գտնվում է կարգաբերման-գործարկման փուլում, այդ կերպ խախտելով Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 10-րդ և 34-րդ կետերը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի «ա» ենթակետը, 30-րդ հոդվածի 1-ին կետը, 42-րդ հոդվածի 1-ին կետի «բ» ենթակետը, 5-րդ կետի «բ» ենթակետը, 6-րդ կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը, Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը, Հանձնաժողովը **որոշում է.**

1. Լիցենզիայի պայմանների 6-րդ, 7-րդ, 10-րդ և 34-րդ կետերի խախտման համար Ընկերությանը տուգանել մեկ միլիոն դրամ գումարի չափով:

2. Լիցենզիայի պայմանների 6-րդ և 7-րդ կետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է Լիցենզիայով սահմանված ժամկետում կառուցել 3887 կՎտ հաշվարկային հզորությամբ «Անապատ-1» փոքր հիդրոէլեկտրակայանը, արտադրել էլեկտրական էներգիա (հզորություն) ու այն վաճառել Շուկայի կանոններով:»,

«7. Փոքր հիդրոէլեկտրակայանի տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

1. Ջրառի նիշերն են՝ 1597.6 մ և 1594.6 մ, ջրահեռացման նիշն է՝ 1305.0 մ
2. Հաշվարկային ելք՝ 2.0 մ³/վ,
3. Հաշվարկային ճնշում՝ 242,3 մ,
4. Փոքր հիդրոէլեկտրակայանի հաշվարկային հզորություն՝ 3887 կՎտ:»:

3. «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը ինը միլիոն ութսունմեկ հազար հինգ հարյուր դրամի չափով ազատել 2014 թվականի դեկտեմբերի 19-ի №3024/10/5 գրությամբ Հանձնաժողով ներկայացված №14-0041 երաշխիքի համաձայն ստանձնած տասնութ միլիոն յոթ հարյուր իննսունինը հազար դրամ գումարի երաշխիքային պարտավորությունից:

4. Ընկերությանը.

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից մեկամսյա ժամկետում որոշման 1-ին կետով նախատեսված գումարը 900005242327 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

2) ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
6 հուլիսի 2016թ.
Ժամը 16⁰⁰